

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ




ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		<u>15.02.19թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճգմաչյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		<u>15.02.19թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Սարգսյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		<u>14.02.19թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		<u>14.02.19թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ		<u>15.02.19թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ		<u>14.02.19թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		<u>14.02.19թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- Հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են 3,896,830 հազ. ՀՀ դրամ, ինչը մոտ 160,999 հազ. ՀՀ դրամով կամ 3.97%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից: 2018թ.ընթացքում Բանկի ստացած տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են 15,860,945 հազ. ՀՀ դրամ՝ մոտ 1.5%-ով զիջելով 2017թ. համապատասխան ցուցանիշին:

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 2,225,531 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 133,160 հազ. ՀՀ դրամով կամ 6.4%-ով:

	հազ.ՀՀ դրամ	Կշիռը	հազ.ՀՀ դրամ	Կշիռը
	01.10.2018 - 31.12.2018		01.01.2018 - 31.12.2018	
Տոկոսային եկամուտներ	3,896,830	100%	15,860,945	100.0%
այդ թվում՝				
Բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	69,661	1.8%	270,241	1.7%
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերից և փոխառություններից	3,026,640	77.7%	12,203,029	76.9%
Պարտքային արժեթղթերից	627,406	16.1%	2,449,849	15.5%
Ռեպո պայմանագրերից	163,639	4.2%	863,282	5.4%
Այլ տոկոսային եկամուտ	9,484	0.2%	74,544	0.5%
Տոկոսային ծախսեր	2,225,531	100%	8,886,646	100.0%
այդ թվում՝				
Բանկի ընթացիկ հաշիվների՝ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդների և վարկերի դիմաց կատարված ծախսեր	1,449,339	65.12%	5,474,594	61.6%
Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց կատարված տոկոսային ծախսեր	561,739	25.24%	2,451,934	27.6%
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսեր	203,875	9.16%	781,436	8.8%
Տոկոսային ծախսեր ռեպո պայմանագրերի դիմաց	3,992	0.18%	131,058	1.5%
Այլ տոկոսային ծախսեր	6,586	0.30%	47,624	0.5%

Հաշվետու եռամսյակում Բանկի ստացած կոմիսիոն և այլ վճարներից զուտ եկամուտները կազմել են

212,670 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 22,451 հազ. ՀՀ դրամով (տարբերությունը՝ -9.5%):

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ընդհանուր վարչական ծախսերն աճել են 92,572 հազ. ՀՀ դրամով կամ 6.5%-ով՝ կազմելով 1,520,888 հազ. ՀՀ դրամ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է 2018 թվականի չորրորդ եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

	2018 թվականի 4-րդ եռամսյակ	2017 թվականի 4-րդ եռամսյակ <i>հազ. ՀՀ դրամ</i>
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3,896,830	4,057,829
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(2,225,531)	(2,092,371)
Զուտ տոկոսային եկամուտ	1,671,299	1,965,458
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	470,470	411,722
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(257,800)	(176,601)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	212,670	235,121
Եկամուտ շահաբաժիններից	1,358	
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	273,228	576,917
Այլ գործառնական եկամուտ	118,164	108,892
Գործառնական եկամուտներ	392,750	685,811
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	(202,398)	460,122
Ընդհանուր վարչական ծախսեր	(1,520,888)	(1,428,316)
Այլ գործառնական ծախսեր	(469,340)	(1,286,689)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	84,093	631,507
Շահութահարկի գծով ծախս	(147,166)	(362,976)
Շահույթ հարկումից հետո	(63,073)	268,531

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո Բանկի վնասը կազմել է 63,073 հազ. ՀՀ դրամ: Հաշվետու եռամսյակի 63,073 հազ. ՀՀ դրամ վնասի ձևավորման արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է -35.82 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 152.5 ՀՀ դրամի դիմաց:

2018թ. արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 2,259,803 հազ. ՀՀ դրամ, իսկ Բանկի շահութաբերության ցուցանիշները հետևյալն են՝


ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 6.10%

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 1.05%:

ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 222,952,430 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 4.9%-ով (10,482,468 հազ. ՀՀ դրամով):

2018 թվականի չորրորդ եռամսյակի ավարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Հաճախորդներին տրված վարկերը և այլ փոխառություններն աճել են 1,437,820 հազ. ՀՀ դրամով կամ 1.2%-ով, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվները՝ 4,082,210 հազ. ՀՀ դրամով կամ 14%-ով, Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվները՝ 134,589 հազ. ՀՀ դրամով կամ 6.2%-ով, Պահանջները բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 7,725,830 հազ. ՀՀ դրամով կամ 56.9%-ով, այլ ակտիվները՝ 1,270,156 հազ. ՀՀ դրամով կամ 105.7%-ով: Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվներն 2018 թվականի չորրորդ եռամսյակի ավարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 126,351 հազ. ՀՀ դրամով կամ 2.2%-ով: Հետաձգված հարկային ակտիվները 31.12.2018թ. դրությամբ կազմել են 52,555 հազ. ՀՀ դրամ:



2018 թվականի չորրորդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ գրանցվել է Բանկի ակտիվների աճ 7.2%-ով (14,885,300 հազ. ՀՀ դրամով): Վերջինս հիմնականում պայմանավորված է կանխիկ դրամական միջոցների ու ՀՀ կենտրոնական բանկում մնացորդների՝ 9,336,333 հազ. ՀՀ դրամ կամ 36.9%, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների՝ 1,106,035 հազ. ՀՀ դրամ կամ 5.5%, հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխառությունների՝ 3,932,686 հազ. ՀՀ դրամ կամ 3.4%, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվների՝ 745,581 հազ. ՀՀ դրամ կամ 2.3% և հիմնական միջոցների ու ոչ նյութական ակտիվների՝ 94,705 հազ. ՀՀ դրամ կամ 1.7% աճով: Միևնույն ժամանակ նվազում է գրանցվել վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների գծով՝ 1.7% կամ 39,043 հազ. ՀՀ դրամ, գույքիլի գծով՝ 7.9% կամ 226,990 հազ. ՀՀ դրամ և այլ ակտիվների գծով՝ 116,562 հազ. ՀՀ դրամ կամ 4.5%:

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխառվածությունների մնացորդները կազմել են 120,604,963 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 1,437,820 հազ. ՀՀ դրամով կամ 1.2%-ով, իսկ 30.09.2018թ.-ի համեմատ՝ 3,932,686 հազ. ՀՀ դրամով կամ 3.4%-ով:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի «Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվների» մնացորդները կազմել են 33,320,448 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 4,082,210 հազ. ՀՀ դրամով կամ 14%-ով, իսկ 30.09.2018թ.-ի համեմատ աճել են 745,581 հազ. ՀՀ դրամով կամ 2.3%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 5,382,267 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 32,819,922 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Պարտավորություններ

2018թ.-ի չորրորդ եռամսյակի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 185,879,488 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 8,564,838 հազ. ՀՀ դրամով կամ 4.8%-ով, իսկ 30.09.2018թ.-ի համեմատ՝ 14,873,670 հազ. ՀՀ դրամով կամ 8.7%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ 14,246,353 հազ. ՀՀ դրամ կամ 17.9% և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի՝ 4,520,163 հազ. ՀՀ դրամ կամ 51.8% աճով: Տարեկան կտրվածքով գրանցվել է նաև Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների նվազում՝ 9,973,376 հազ. ՀՀ դրամով կամ 11.4%-ով և Այլ պարտավորությունների նվազում 46,650 հազ. ՀՀ դրամով կամ 2.6%-ով: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հետաձգված հարկային պարտավորությունները կազմում էին 118,577 հազ. ՀՀ դրամ:

30.09.2018 թվականի համեմատ, պարտավորությունների աճին հիմնականում նպաստել է Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 7,374,792 հազ. ՀՀ դրամով կամ 10.6%-ով, ինչպես նաև Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 7,347,279 հազ. ՀՀ դրամով կամ 8.5%-ով աճը:

Ընդհանուր կապիտալ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 37,072,942 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1,917,630 հազ. ՀՀ դրամով կամ 5.5%-ով, իսկ 30.09.2018թ. համեմատ՝ 11,630 հազ. ՀՀ դրամով կամ 0.03%-ով:

Արտարժութային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժութային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 226.6 մլն ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 8,082.7 մլն ՌԴ ռուբլի,

Եվրոյով գործարքների ծավալը՝ 130.3 մլն Եվրո:

Վերը նշված արտարժութային գործառնություններից հաշվետու եռամսյակում ստացված զուտ եկամուտը կազմել է 219.2 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 242.9 մլն. ՀՀ դրամի դիմաց:

Ծառայություններ և հաճախորդներ

Վճարահաշվարկային գործառնությունների ծառայություններից կոմունալ վճարումների հավաքագրումը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 206,778 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 5,234,815 հազ. ՀՀ դրամ:

2018թ.-ի չորրորդ եռամսյակի ընթացքում Բանկի հաճախորդների քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 384-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ 5,647-ով և կազմել 110,952:


Վճարահաշվարկային գործառնություններ

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 190,467,880 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 228,890,949 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն նվազել է 2,946 հատով՝ կազմելով 145,364 հատ, որից 89,837-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, 53,298-ը՝ MasterCard և Visa Card միջազգային պլաստիկ քարտերին, 2,229-ը՝ Diners Club միջազգային պլաստիկ քարտերին:



Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը ¹	Հազ. ՀՀ դրամ	
	2018թ. 4-րդ եռամսյակ (աուդիտ չանցած)	2017թ. 4-րդ եռամսյակ (աուդիտ չանցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-63,073	268,531
Սեփական կապիտալի միջին մեծություն	37,067,127	35,088,437

¹ Հաշվարկներում հոսքային ցուցանիշները տարեկանացված են:

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	-0.17%	0.77%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-63,073	268,531
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	215,509,780	207,377,314
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	-0.03%	0.13%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-63,073	268,531
Գործառնական եկամուտ ²	2,276,719	2,886,390
Զուտ շահույթի մարժա (NPM), %	-2.77%	9.30%
Գործառնական եկամուտ ²	2,276,719	2,886,390
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	215,509,780	207,377,314
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	1.06%	1.39%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	215,509,780	207,377,314
Սեփական կապիտալի միջին մեծություն	37,067,127	35,088,437
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.81	5.91
Զուտ տոկոսային եկամուտ	1,671,299	1,965,458
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (ՄԵԱ)	172,346,856	162,602,751
Զուտ տոկոսային մարժա (NIM),%	0.97%	1.21%
Տոկոսային եկամուտ (ՏԵ)	3,896,830	4,057,829
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (ՄԵԱ)	172,346,856	162,602,751
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	2.26%	2.50%
Տոկոսային ծախսեր (ՏԾ)	2,225,531	2,092,371

² Ներառում է զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները, ինչպես նաև ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարները:

Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր (ՄԾՊ)	184,101,712	175,308,572
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	1.21%	1.19%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-63,073	268,531
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. Հատ	1,760,731	1,760,731
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), ՀՀ դրամ	-35.82	152.5
Սպրեդ, % (ՏԵ)/(ՄԵԱ)-(ՏԾ)/(ՄԾՊ)	1.05%	1.30%

**Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած
կարևոր դեպքերի նկարագիրը**

Համաձայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի՝ 2018թ. հոկտեմբերի 24-ի թիվ ՈՐԽ0102-09/01Լ որոշման՝ ստեղծվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Նուբարաշեն մասնաճյուղը, հաստատվել են վերջինիս տնտեսական ծրագիրն ու կանոնադրությունը:

Համաձայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի՝ 2018թ. նոյեմբերի 5-ի թիվ ՈՐԽ0102-11/01Լ որոշման՝ դադարեցվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորենացի 1 մասնաճյուղի գործունեությունը:

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 2018թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1/753Ա որոշման համաձայն վերսկսվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամի պաշտոնում Նարեկ Բեգլարյանի գրանցման կասեցված ժամկետը և վերջինս գրանցվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամի պաշտոնում:

**Հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը,
որոնց հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու
ժամանակաշրջանում**

Հաշվի առնելով Բանկի ակտիվների իրացվելիության բարձր մակարդակը, վարկային և արտարժույթային ռիսկերի ցածր մակարդակը, միջոցների ներգրավման լայն հնարավորությունները և ներգրավման աղբյուրների դիվերսիֆիկացման բարձր մակարդակը՝ Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում Բանկի գործունեության վրա էական ազդեցություն կարող են ունենալ արտաքին

միջավայրի հնարավոր բացասական զարգացումները: Արտաքին միջավայրի հնարավոր բացասական զարգացումներ են դիտարկվում տարածաշրջանային և ներքին քաղաքական ռիսկերը, երկրի տնտեսական ակտիվության և բիզնես միջավայրի վատթարացման ռիսկերը, պետական կարգավորման և հարկաբյուջետային քաղաքականության հետ կապված ռիսկերը, գնաճի և ՀՀ դրամի արժեզրկման հետ կապված ռիսկերը ու վարկային ռիսկի հնարավոր աճը:

**Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը
հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար**

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով և չափանիշներով ու դիտարկվում են հետևյալ ցուցանիշների փոփոխությամբ.

- Բանկի ընդհանուր ակտիվների շարունակական աճի ապահովում՝ հիմնականում վարկային ներդրումների աճի հաշվին,
- Ժամկետային ավանդների և ցպահանջ ավանդների մնացորդների փոխարինում ֆինանսական կառույցներից ներգրավվող ցածր ծախսատար միջոցներով,
- ստացվելիք կոմիսիոն գումարների աճ՝ Բանկի հաճախորդների թվի շարունակական աճի ապահովման և սպասարկման որակի բարձրացման արդյունքում,
- համագործակցող կազմակերպությունների շրջանակների ընդլայնում և Բանկի քարտապանների թվի համալրում
- մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացում,
- եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ, վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ: